

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՍԻՐԱՆՈՒՇ ԳԱՌՆԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՔՍԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԵՋ

**Ժ.02.02 - «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Ա. Ս.Աբրահամյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Յու. Ս. Ավետիսյան

քանասիրական գիտությունների
թեկնածու Մ. Վ. Տուֆեկչյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014թ. ապրիլի 7-ին՝ ժամը 15:00-
ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի լեզվաբանության
019 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ Երևան, 0015, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. մարտի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ քանասիրական գիտությունների
թեկնածու Ն. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴ՝.....Ր ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Լեզվաբանության պատմության վերջին շրջանում հատուկ ուշադրության է արժանանում հատկապես լեզվական խոշորագույն միավորը՝ տեքստը: Այս միավորի քննությամբ զբաղվում է տեքստի լեզվաբանությունը: Եթե 20-րդ դարը լեզվաբանության համար նշանավոր է նոր գիտաճյուղի՝ տեքստի լեզվաբանության կազմավորմամբ, ապա հասարակական կյանքում նույն դարը շրջադարձային է ոչ միայն քաղաքական իրադարձությունների, այլ նաև հեռահաղորդակցության նոր սարքավորումների ու մանավանդ համացանցի լայն կիրառությամբ: Հեռահաղորդակցության ժամանակակից միջոցները իրենց ազդեցությունն ունեցան նաև լեզվի վրա: Բայց էլեկտրոնային հաղորդակցման լեզվին շատ քիչ են անդրադարձել և՛ արտասահմանյան, և՛ առավել ևս հայ լեզվաբանության մեջ: Չնայած նրան, որ հայ իրականության համար նույնպես խորթ չէ էլեկտրոնային հաղորդակցումը, միևնույնն է, հայ լեզվաբանությունը կարծես ուշադրությունից դուրս է թողել այդ հաղորդակցությունն իրականացնող լեզուն: Հաշվի առնելով այն, որ էլեկտրոնային հաղորդակցությունը հայ հասարակությանը փոխանցվեց այլալեզու միջավայրից, հաշվի առնելով այն, որ ընդհանրապես լեզուները զգայուն են միմյանց նկատմամբ, և այն, որ ամեն տիպի օտարաբանությունները մեծ արագությամբ տարածվում և կայունանում են լեզուն կրող հասարակության խոսքում, անհրաժեշտ ենք համարել անդրադառնալ հաղորդակցման նոր տեսակի տեքստերին ու փորձել ստանալ հնարավորինս ընդգրկուն ուսումնասիրություն:

Աշխատանքի նպատակն ու խնդիրները: Մեր աշխատանքի նպատակն է էլեկտրոնային տեքստերի հնարավորինս համապարփակ քննություն ներկայացնել՝ վեր հանելով դրանց այն յուրահատկությունները, որոնցով այդ տեքստատեսակները առանձնանում են այլ տեքստատեսակներից: Նկատելով օրեցօր լայնացող սահմաններ ունեցող այս տեքստատեսակի յուրահատկությունները՝ մեր առաջ խնդիր ենք դրել հատկապես քննել դրա հայերեն դրսևորումները: Այս առումով մեր գլխավոր խնդիրն էր հնարավոր լուծում գտնել էլեկտրոնային հայերենի թերությունները գոնե որոշ չափով սահմանափակելու կամ դրանց հետագա տարածումը կանխելու համար:

Գիտական նորույթը: Օգտագործելով էլեկտրոնային հաղորդակցման հիմնական միջոցի՝ համացանցի հարուստ նյութը՝ հաղորդակցում իրականացնող տեքստերը, ոչ միայն տեսակավորել ենք դրանք, վեր հանել դրանց լեզվաոճական առանձնահատկությունները, այլ նաև առաջին անգամ կատարել ենք էլեկտրոնային տեքստերի դասակարգումներ՝ ըստ կառուցվածքի, իրադրական գործածության, արտահայտչամիջոցների ընտրության, առաջին անգամ ցույց ենք տվել, որ էլեկտրոնային հաղորդակցում իրականացնող տեքստը ինքնուրույն տեքստատեսակ է՝ միայն իրեն բնորոշ հատկանիշներով: Աշխատանքում մեր առաջ դրած խնդրի հանդեպ մեր ունեցած դիրքորոշումը թույլ է տվել միաժամանակ ներկայացնել և՛ լեզվական, և՛ լեզվամտածողության այնպիսի խնդիրներ, որ ուղղակիորեն կապված են էլեկտրոնային հաղորդակցման լայնածավալ տարածման հետ: Աշխատանքը առաջին ուսումնասիրությունն է, որ անդրադառնում է էլեկտրոնային իրականության մեջ գործող հայերենին:

Հետազոտության նյութը և մեթոդաբանական հիմքը: Որպես ուսումնասիրության նյութ են ծառայել ամենատարածված սոցիալական կայքերի (odnoklassniki.ru, facebook.com, vkontakte.ru, hayland.am, my.mail.ru), էլեկտրոնային փոստերի (yahoo.com, mail.ru, live.com, gmail.com), հեռահաղորդակցության մասնավոր ծրագրերի (Yahoo!, Skype, ICQ, MSN), որոնման համակարգերի (www.google.com(am/ru), www.yandex.ru), աուդիո- և վիդեոնախագծային կայքերի (www.audiopoisk.com, muzofon.com, youtube.com, video.yandex.ru, video.ru), ֆորում-կայքերի (for-ua.com, forum.armedu.am, akumb.am), հայկական որոշ կայքերի (armeco.am, molorak.do.am, zhamanc.am), չափ իրականացնող կայքերի (soft4ka.ru, uraxutyun.do.am, myhayastan.am) հայերեն և այլալեզու տեքստերը:

Էլեկտրոնային տեքստերի լեզվաբանական ուսումնասիրությունը կատարել ենք հիմնականում փաստական և տեսական մեծածավալ նյութի ուսումնասիրության հիման վրա՝ համաժամանակյա տեսանկյունից նյութի նկարագրության և վերլուծության մեթոդներով, երկու հայեցակետերի համադրությամբ՝ զուտ լեզվաբանական և սոցիալական-փիլիսոփայական: Մեր հավաքած 1000-ը գերազանցող էլեկտրոնային տարատեսակ տեքստերից ամենատիպականները ներկայացված են սույն աշխատանքի մեջ՝ որպես տեսական նյութի հիմնավորումներ:

Ուսումնասիրության տեսական ու գործնական արժեքը: Մեր ատենախոսության մեջ ներկայացված խնդիրների ուսումնասիրությունը ու լեզվաոճական վերլուծությունները, կատարված լինելով վերը նշված երկու հայեցակետերի համադրությամբ, վերաբերում են մի կողմից՝ տեքստի լեզվաբանությանը, մյուս կողմից՝ լեզվափիլիսոփայությանը. առաջին բնագավառում ներկա աշխատանքը կարող է ծառայել որպես տեսություն նորագույն տեքստատեսակի հետագա ուսումնասիրության համար, իսկ երկրորդ բնագավառում այն կարող է դառնալ էլեկտրոնային հաղորդակցում իրականացնող տեքստերի և անհատական ու հասարակական մտածողության փոխադարձ կապի ուսումնասիրության հիմք: Գործնականում աշխատանքը կարող է ծառայել որպես հատուկ ուղղվածության դասընթացի նյութ և կարող է օգտակար լինել էլեկտրոնային հայերենի կարգավորման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսության ծավալը 142 մեքենագիր էջ է: Ատենախոսությունը ներառում է ենթագլուխներից բաղկացած չորս գլուխ, վերջաբան և գրականության ցանկ:

Հրապարակումները: Ատենախոսության վերաբերյալ կան հրապարակումներ, որոնց ցուցակը ներկայացված է սեղմագրի վերջում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունը ներառում է համառոտ անդրադարձ տեքստ միավորի քննության պատմությանը, նշել ենք ներկա աշխատանքի նպատակը, հետազոտվող նյութի սահմանները, ներկայացրել ենք մեր առաջ ունեցած խնդիրները:

Առաջին՝ «Տեքստը որպես լեզվական ինքնուրույն միավոր» գլխում, հաշվի առնելով մեզ նախորդած հետազոտողների ավանդը այս միավորի ուսումնասիրության գործում և միաժամանակ մատնանշելով թերությունները, փորձել ենք լրացնել բացթողումները՝ համադրելով անցյալի ձեռքբերումներն ու սեփական դիտարկումները: Ներկայացրել ենք նաև մեր սեփական մոտեցումը տեքստ լեզվական միավորին, տվել դրա բնութագրումն ու սահմանումը մեր տեսանկյունից:

Տեքստը լեզվական միավոր է: Մյուս միավորներից այն առաջին հերթին տարբերվում է իրականության հետ ունեցած հարաբերությամբ և նրանով, որ գործ ունենք չորս կողմի հետ՝ հեղինակ, ներքին խոսք, արտահայտության ձև, հասցեատեր կամ ընկալող:

Տեքստի բազմաթիվ սահմանումներից ոչ մեկը սխալ համարել չի կարելի, պարզապես դրանք տեքստի միայն այս կամ այն հատկանիշն են սահմանում որպես ընդհանուր բնութագրություն: Եթե փորձենք հնարավորինս կարճ սահմանում տալ լեզվական տեքստին, կստացվի այսպես. *լեզվական տեքստը ձևային պլանում քերականորեն կարգավորվող և բովանդակային պլանում սուբյեկտ-սուբյեկտ կամ սուբյեկտ-օբյեկտ հարաբերություն ներառող միավոր է*, այսինքն՝ սա այնպիսի ամբողջ է, որտեղ որպես պարտադիր բաղադրիչներ համադրվում են երկկողմանի հարաբերություն (սուբյեկտ-օբյեկտ կամ սուբյեկտ-սուբյեկտ) արտահայտող բովանդակությունը և լեզվական տարբեր միավորների բովանդակային և տրամաբանական կապակցությունը: Այս

բաղադրիչներից երկրորդը միշտ հանդես է գալիս որպես առաջինի արտահայտման, օտարման ձև:

Եթե ընդհանրապես հաղորդակցության մեջ տարբերակենք ակտիվ կամ երկկողմանի հաղորդակցումը (երբ տեղեկատվությունը փոխադարձ է) և պասիվ կամ միակողմանի հաղորդակցումը (երբ տեղեկությունը միայն ստացվում կամ միայն ուղարկվում է), ապա կախված հաղորդակցման այս տեսակներից՝ կառանձնանան նաև տեքստերը¹: Այս տարբերակման հիման վրա տեքստի երկու տեսակ առանձնացնենք՝ շարժակերպ և անշարժակերպ: Շարժակերպ է ակտիվ հաղորդակցում հանդիսացող, պատասխան ակնկալող տեքստը, իսկ անշարժակերպը՝ անշարժը, պասիվ հաղորդակցության տեքստն է: Առանձնացնում ենք նաև անշարժակերպ տեքստի երկու տեսակ՝ «պտտանման» և «ճառագայթանման»: Պտտանման տեքստը նման է փակ օղակի, որի վրա նշված է մի կետ (ասենք՝ գրական ստեղծագործության վերնագիրը), բայց այդպես էլ անորոշ է՝ այդ կետը տվյալ շրջանագծի սկիզբն է, թե՞ վերջը: Սա հնարավոր է և՛ ձևային, և՛ բովանդակային առումներով: Ճառագայթանման տեքստերը նույնպես կարելի է երկու տեսակի բաժանել. մի դեպքում տեքստը կիսատ է, իսկ մյուս դեպքում տեքստն ավարտված է գիտակցվում, մինչդեռ բովանդակային առումով այն հնարավոր է շարունակել: Մարդկային հաղորդակցումը տեղի է ունենում մի կողմից՝ պատասխան ակնկալող տեքստերի, մյուս կողմից՝ ճառագայթանման և պտտանման տեքստերի միջոցով:

Կարելի է նաև առանձնացնել երեք տիպի տեքստ՝ հաշվի առնելով այդ նշանի ու իրականության կապը. ժամանակ կրող տեքստ (օրինակ՝ պատմություն շարադրող տեքստերը), տարածություն կրող տեքստ (օրինակ՝ տեղանքի նկարագրությունները) և տեքստ՝ որպես առանձին իրականություն (երբ ամեն ինչ կամ որոշ հատվածներ հորինված են): Ի վերջո, պետք է ասել, որ տեքստը մի կողմից՝ ընդգրկում է իրականությունը կամ ընդունակ է այն ընդգրկելու, մյուս կողմից՝ ինքն էլ այդ իրականության մասն է: Տեքստը լեզվի պատմական ու մշակութային միավոր է, անսկիզբ ու անվերջ նշան:

Համացանցի անսահմանությունը ազատություն տվեց տեղեկատվության փոխանցմանը²: Հաղորդակցություն իրականացնելու եկած բազմաթիվ միջոցները մարդկային լեզվին տվեցին նոր գործառույթներ, իսկ լեզվի հաղորդակցման գործառույթը իրականացնող միջոցներին ավելացավ ևս մեկը՝ էլեկտրոնային կամ էկրանային տեքստը, որ իր ենթատեսակներով կարծես թե լեզվի մաս է դարձել:

Երկրորդ՝ «էլեկտրոնային տեքստ» գլուխը ներկայացնում է էլեկտրոնային հաղորդակցման բերած փոփոխությունները լեզվում. նկարագրվում է, թե ինչ է էլեկտրոնային տեքստը, ինչպես է իրականանում հաղորդակցումը տեքստի այդ տեսակի միջոցով, ներկայացվում են էլեկտրոնային տեքստի տեսակները, նկարագրվում այդ տեքստերի առանձնահատկությունները: Այս գլխի վերջին ենթագլխում ցույց ենք տալիս նաև, թե ինչու առաջացան ու տարածվեցին էլեկտրոնային տեքստերը, և թե դրանց գոյությունն ինչ նշանակություն ունի ընդհանրապես հասարակության համար:

Մեր ժամանակներում հեռահաղորդակցության նորագույն միջոցները ուղղակի ազդեցություն են թողնում նախ անհատական, ապա նաև ընդհանրապես խոսքի մակարդակում: Ուրեմն ճիշտ կլինի նախ առանձնացնել խոսքի արտահայտության բանավոր և գրավոր մեծ տեսակները՝ միանշանակ տեքստ համարելով և՛ մեկը, և՛ մյուսը, ընդ որում հիշելով, որ բանավոր խոսքը առավելություն ունի գրավորի համեմատ³: Որպես բանավոր խոսքի տեսակներ՝ ընդունենք գրականի և խոսակցականի տարբերակումը, իսկ

¹Սա ընդհուպ մոտ է տեքստերի ոճական դասակարգմանը, սակայն դրան կանդիդատանք հետագա շարադրանքում:

²Տե՛ս Эйдман И. Прорыв в будущее. Социология интернет-революции. М., 2007, стр.337:

³Տե՛ս Palmer F. Semantics. Cambridge, 1976, էջ 9:

գրավոր խոսքի մեջ այսպիսի բաժանում ենք անում՝ *իրական-նյութական* և *իրական-կարծեցյալ (virtual)*, որ է հենց էլեկտրոնային կոչված տեքստը: Իրական-նյութականը թղթին եղած գիրն է՝ այն, որ տեսնում ենք թղթին հանձնված, ընդ որում նշանակություն չունի՝ ձեռագիր՞, թե՞ տպագիր: Իրական-կարծեցյալ ենք համարում այն բոլոր գրերը, որ տեսնում ենք էկրանին՝ անկախ դրա տեսակից, բայց միշտ նկատի ունենալով այսպես ասած հանրորեն հասանելի սարքերը՝ մասնավորապես համակարգիչը ու դրա տեսակները: Որպես իրական-կարծեցյալ տեքստի տեսակներ՝ առանձնացնում ենք նախ հետևյալները՝ *ուղղակի թվային տեքստեր* և *անուղղակի թվային տեքստեր*: Անուղղակի թվային տեքստերն այն տեքստերն են, որոնց սկզբնական կամ վերջնական վիճակը կամ գոյությունը իրական-նյութական տեքստ է: Ուղղակի թվային տեքստերն այն տեքստերն են, որոնց գոյության միակ միջոցը համակարգիչն է: Ուղղակի թվային տեքստ ասելիս պետք է հասկանալ միայն այն տեքստերը, որոնք սովորաբար թղթին չեն հանձնվում. դրանք թղթին հանձնելը աննպատակ է, կամ դրանք միայն միջանձնային ակտիվ հաղորդագրություններ են: Անուղղակի թվային տեքստերը լեզվական իմաստով բացառիկ տեքստատեսակներ չեն, և ավելորդ ենք համարում դրանք խմբավորելը՝ հաշվի առնելով լեզվական իմաստով դրանց առանձնահատկությունների բացակայությունը: Մինչդեռ ուղղակի թվային տեքստերում անհրաժեշտ է որոշակի խմբեր առանձնացնել՝ մեխանիկական ծագման և անձնական նշանակության տեքստեր: Առաջինը այն տեքստերն են, որոնք համապատասխան պահին հայտնվում են էկրանին, և այս դեպքում գործ ունենք մարդ - մեքենա կամ կենդանի լեզու - արհեստական բանականություն հարաբերության հետ⁴: Իսկ անձնական նշանակության տեքստերը կարելի է բաժանել ավելի մանր բազմաթիվ տեսակների՝ էլեկտրոնային հոդված, էլեկտրոնային նամակ, էլեկտրոնային հաղորդագրություն և այլն:

Երբ բանավոր խոսքը պետք է գոյության մի ձևից մյուսին անցնի, վերածվի իրական-կարծեցյալ տեքստի (այսինքն՝ «էկրանին հանձնվի»), նկատվում է, որ աստիճանաբար մարդը սկսում է մտածել միանգամից այն հնարավորությունների սահմաններում, որ իրեն ընձեռում է էկրանը: Մտածելու հետ կապված ցանկացած փոփոխություն հետագայում արտահայտություն է գտնում և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքերի մեջ կամ ազդում է դրանց վրա: Օրինակ՝ էլեկտրոնային հաղորդակցության բառապաշարի մաս դարձած անգլերեն «oh my God» արտահայտության հապավում «OMG» կամ անգլերեն «ok» արտահայտությունը այսօր կարելի է հանդիպել սոցիալական կայքերը որպես հաղորդակցման միջոց օգտագործող բազմաթիվ անձանց նույնիսկ բանավոր խոսքում, ընդ որում ոչ թե ամբողջական «oh my God» և «օ՛հ ke1», այլ հապավումների նման:

Սոցիալական կայքերում կազմվող անհատական պրոֆիլները կարելի է «պիտակ» (shortcut) անվանել, և էլեկտրոնային միջավայրում մարդկանց միջև հարաբերության առաջին քայլը սկսվում է հենց այստեղից: Պիտակը նաև ինքնարտահայտման, ինքնաներկայացման, շատ հաճախ էլ ժամանցի միջոց է: Այս երեքն իրականացնելու համար լեզվական տեքստը հինգ տեսակով է դրսևորվում: Որպես **առաջին տեսակ**՝ ընդունենք անունը: Սոցիալական կայքերում տեքստի այս տեսակը լրացվում է **երկրորդ տեսակով**՝ նկարով: **Երրորդ տեսակն** է երաժշտությունը, որ տեղադրվում է պիտակում: **Չորրորդ տեսակը** ժամանցային ամենատարածված միջոցը պիտակին կցված խաղերն են, որ դուրս են գալիս հաղորդակցվող կողմերից մեկի ենթագիտակցությունից և գնում են մյուս կողմի ենթագիտակցություն: **Հինգերորդ տեսակը**՝ զրույցը, մի կողմից՝ ինքնարտահայտում իրականացնող, մյուս կողմից էլ՝ ժամանցային միջոց է: Չրույցն ամենամեծ և կարծես թե ճշգրիտ տեղեկատվության հիմնական կրողն է: Այս տեքստը կարող է մի քանի տեսակով արտահայտվել՝ երկխոսություն, կարգավիճակ, մեկնաբանություն, քննարկում (форум): Վերջին երեքը ի վերջո դառնում են զրույց, միայն թե իրարից տարբեր են երկխոսության և

⁴Ст'и Попов Э. Общение с ЭВМ на естественном языке. М., 1982, стр. 20:

այս ճանապարհով ձևավորված գրույցի կառուցվածքն ու նշանակությունը. երկխոսությունը փակ է. ընթանում է երկու կողմերի միջև, և այդ երկու կողմերից դուրս ոչ մեկին տեսանելի չէ, իսկ կարգավիճակը, քննարկումը բաց գրույցներ են, քանի որ մեծ մասամբ տեսանելի են բոլորին և, քանի որ դրանք ի սկզբանե մասնավոր հեղինակ - րնդհանուր հասցեատեր հաղորդակցումներ են, ի վերջո վերածվում են բազմակողմ գրույցի: Հաշվի առնելով սոցիալական կայքերում հաղորդակցություն իրականացնող տեքստերի ընդգրկած տեղեկատվության ծավալը՝ կարող ենք դրանց հինգ տեսակները ստորակարգել հետևյալ կերպ՝ գրույց-տեքստ, անուն-տեքստ, նկար-տեքստ, խաղ-տեքստ, երաժշտություն-տեքստ:

Լեզվական տեքստը կարող է ստանալ անթիվ ոչ լեզվական լրացումներ: «Օբյեկտիվ իրականությունը, որ արտահայտելի է տեքստով»⁵, փոխարենը արտահայտվում է բառի բուն իմաստով «պատկերայնորեն»⁶:

Էլեկտրոնային ակտիվ հաղորդակցությունը, ցավոք, լավագույն կերպով չի ազդում լեզուների վրա. առաջին խնդիրը, որ պատճառ է դառնում այլ խնդիրների, այբուբենն է: Բոլոր այն լեզուները, որոնց այբուբենը լատինատառ չէ, գերազանցապես օգտվում են տրանսլիտից: Տրանսլիտից չտուժող լեզուները պետք է որ ռոմանական ու գերմանական լեզուները լինեին, հատկապես՝ անգլերենը: Գիշտ է, անգլերենը, օրինակ, այբուբենի խնդիր չունի, բայց տուժած է, քանի որ լեզվական միջոցները մի տեսակ խնայողաբար են գործածվում: Հասկանալի է՝ ժամանակին փոքր ծավալով հնարավորինս մեծ տեղեկատվություն փոխանցելու ցանկությունը հանգեցրել է նրան, որ, օրինակ, «Be back later» արտահայտությունը սեղմվել է «BBL» աստիճանի, իսկ «Are we going to have to go through all this again?» նախադասությունը՝ «AWGTHGTATA»: Սակայն այժմ անգլերենը նույնիսկ հաշտվել է այդ ձևերի հետ, նույնիսկ հանդիպում են դրանց վերաբերյալ ուսումնասիրություններ, դրանք վերծանող ցանկեր և այլն⁷: Անգլերենի այդ սեղմված ձևերն ազդում են նաև այլ լեզուների վրա, և, օրինակ, ռուսերեն «СПАСИБО» արտահայտությունը վերածվում է պարզապես «СПС»-ի, իսկ հայերեն, օրինակ, «ԲԱՐԻ ԳԻՇԵՐ»-ը՝ ընդամենը «ԲԳ»-ի: Էլեկտրոնային տեքստը, չնայած ծնվել է մարդկության զարգացման մեզ հայտնի փուլերից բարձրագույնի ընթացքում, զարմանալիորեն հասարակ է, պարզունակ: Սա մտքի նշանակողի պարզունակ ձև է, որին բնորոշ է ձևերի խնայողությունը: Խոսքը ոչ թե արտահայտչամիջոցներին է վերաբերում, այլ հենց լեզվական միավորներին: Եթե մի ամբողջ բառ կարելի է կրճատել մինչև մեկ տառ, նշանակում է, որ մարդը կարևորում է ոչ այնքան այն երևույթը, որի մասին խոսում է, որքան պարզապես խոսելը, և եթե մի ամբողջ ապրում խցկվում է ամենաշատը երեք գույնից կազմված պատկերիկի մեջ, ուրեմն կարևորվում է ոչ այնքան հենց ապրումը, որքան պարզապես դիմացինին դրա մասին տեղեկացնելը:

Ի տարբերություն «փորձառու» տեքստատեսակների՝ էլեկտրոնային տեքստի պատմամշակութայնությունը խիստ հարաբերական է. մի կողմից՝ այն չի կարող պարփակել, ներկայացնել մեծ ժամանակահատված, այսինքն՝ պատմականաճալ, մյուս կողմից՝ ժամանակահատված է կրում այնքանով, որ ինչ-որ մեկի անհատական ժամանակն է կրում կամ փոխանցում ինչ-որ մեկին: Որպես մշակույթ՝ էլեկտրոնային տեքստը անհատական ստեղծագործություն է, քանի որ նորագույն իրականության հնարավորությունները տարբեր են սովորականից: Սա թույլ է տալիս էլեկտրոնային տեքստ կազմողին միշտ ստեղծագործել:

⁵Тураева З. Лингвистика текста. М., 1986, стр. 7.


⁶Гаузенблас К. О характеристике и классификации речевых произведений // Новое в зарубежной лингвистике. Вып. VIII. М., 1978, стр. 61.

⁷ Սեղմված, կրճատված կամ հապավում դարձած արտահայտությունների ընդարձակ ցանկ տես՝ A Guide to Letter-Writing. New Lanark, 2005, էջ 379-383:

Երրորդ՝ «Չայերեն էլեկտրոնային տեքստը» գլխում ներկայացվում են էլեկտրոնային հաղորդակցման մեջ հայերենի առանձնահատկություններն ու թերությունները: Մեր դիտարկման արդյունքում պարզել ենք, որ հայերեն տեքստը էլեկտրոնային տարածության մեջ դրսևորում է հնչյունական, բառային, ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկություններ՝ ներառյալ այնպիսիք, որ որպես թերություններ կարող են ազդել նաև բանավոր խոսքի վրա: Գլխի ենթագլուխներից մեկում մանրամասն ներկայացվում է այն վտանգը, որի մեջ կարող է հայտնվել ընդհանրապես հայերենը՝ անընդհատ ներառելով իր էլեկտրոնային դրսևորման թերությունները: Դրան հաջորդող ենթագլխում ցույց ենք տվել այն ճանապարհը, որը մեր կարծիքով կարող է դառնալ վտանգը շրջանցելու ձև:


Էլեկտրոնային հաղորդակցման հայերեն տեքստը պարզապես ինչ-որ ձևերի մեջ խցկած բովանդակություն է⁸: Անդրադառնում ենք մասնավորապես ձևերին՝ առանձնացնելով շարահյուսական (հիմնականում՝ կետադրություն, նախադասությունների կապակցություն), ձևաբանական (այս կամ այն խոսքի մասի դրսևորման ձևերը), բառագիտական (մասնավորապես բառային կազմի համալրում), հնչյունաբանական (ուղղագրություն, գրաբանություն) խնդիրներ: *Շարահյուսական հարցեր:* Էլեկտրոնային տեքստերում հաճախ են լինում նախադասությունների քերականական-իմաստային հարաբերությունների խախտումներ, օրինակ՝ երբ մեկ զրույցի ընթացքում զրուցակցի հաղորդագրությունը տեղ է հասնում ավելի ուշ, քան պետք է հասներ, և մյուս զրուցակիցը իր ասելիքն արդեն շարադրել է ու հարցը ստանալուն պես դրա պատասխանը կցում է իր ասելիքին: Այդ կցվածն առաջին հայացքից դիտվում է որպես արդեն շարադրվածի մաս, մինչդեռ բովանդակությամբ նրա շարունակությունը չէ:

Կան հատկապես պատճառահետևանքային հարաբերության շեղումներ ընդունված ձևերից, երբ պատճառ արտահայտող նախադասության և հետևանք ցույց տվող նախադասության միջև անհարթություն է առաջանում կամ զրուցակցի անժամանակ հաղորդագրության, կամ ոչ լեզվական ինչ-որ նշանի գործածման արդյունքում, օրինակ՝




Չանդիպում են նաև շարահարության արտառոց արտահայտություններ, երբ նախադասությունների միջև դրվում է, օրինակ, այնպիսի հղում, որը ձևային առունով անմիջապես խզում է նախադասությունների և՛ տրամաբանական, և՛ քերականական կապերը, չնայած դրված է որպես մտքի լրացում: Այդպիսին է հետևյալ օրինակը.

⁸Բնորոշ է նաև «ճանկերում հայտնված բառ» արտահայտությունը, որով թղթի գրից ստացված առաջին տպավորությունն են բնութագրում որոշ ուսումնասիրողներ (Տե՛ս Маклюэн М. Понимание Медиа: Внешние расширения человека. М., 2003, стр. 43):



Պատկերիկները ոչ միայն դառնում են նախադասության յուրահատուկ անդամ, այլև շատ հաճախ կարծես թե հենց նախադասության նոր տեսակի են վերածվում. կապակցված խոսքում լիովին ինքնուրույն իմաստով հանդես գալով՝ փոխարինում են մի ամբողջ նախադասության: Սա կարելի է համարել յուրօրինակ զեղչում կամ, ավելի ճիշտ, խտացում՝ նախադասության զեղչում կամ խտացում պատկերի միջոցով, որ բնորոշ է միայն էլեկտրոնային հաղորդագրությունների: Ջանազան անդամների զեղչումը համատարած է. դա հնարավոր է նաև տեխնիկական խնդրի հետևանքով, օրինակ՝



Հետաքրքիր է, որ նախադասությունը կարող է զեղչվել կամ խտանալ՝ պարզապես արտահայտվելով հնչերանգն արտահայտող կետադրական նշանի միջոցով, օրինակ՝



Այդպիսի դեպքեր նկատվում են նույնիսկ պատմողական նախադասությունների մեջ, որտեղ խոսքը խտանում է զանազան նշաններում, ինչպես՝

Inch ka chka?
 !!!!!!!!!!!!!!!!!!!!!
 Ha?
 Spasi asem !
)))))

Ջարմանալի ու գրեթե անբացատրելի է այն երևույթը, երբ նույնիսկ նախադասությունը տողատված է փոխանցվում: Իհարկե, այս երևույթը սովորաբար կարելի է տեսնել բարդ կամ պարզապես ընդարձակ նախադասությունների դեպքում, բայց չեն բացառվում նաև համառոտ խոսքի տողատումները (գուցե ավելի ճիշտ է ասել «բառատում»), ինչպես ստորև տրվող օրինակում է.

INCHI
 HAMAR
 ES
 ASUM?

Խեղաթյուրված է հայերենի *կետադրությունը*: Կետադրական նշանները հաճախ գործածությունից դուրս են: Կարող են գործածվել դրանց «թարգմանված» տարբերակները, ինչպես հետևյալ օրինակում, որտեղ հայերեն «`» նշանը փոխարինված է «-» նշանով, «:»-ը՝ «.»-ով, իսկ չակերտները՝ համապատասխան օտար տարբերակով.

Patkeracru - shat lav chi stacvel.
 Arajinn el kochvum er "Jangot banalin".
 Ay eni lavn er.
 Չեմ տեսեկ, չեմ կապարացել:

Թարգմանվող կետադրական նշաններից են առոգանության նշաններից՝ բացականչականը (փոխարենը սովորաբար գործածվում է «!» կամ պարզապես տառի բազմակիություն, օրինակ՝ վա՜յ – vay!–վաաայ, ողջու՜յն – voxjuyn! – voxjuusuyn, տեսե՛լ եմ – tesel em!!! – teseeeeel em), հաճախ՝ և՛ մեկը, և՛ մյուսը՝ teseeeeel em!!!, voxjuusuyn!!, վաաաայ! և այլն), հարցականը (փոխարենը՝ «?»), օրինակ՝ Ի՞նչ ես անում:– Inch es anum? – Ինչ ես անում???, Ասե՞մ– Asem? – Ասեմ??, Կգա՞ս, թե՞ մենք գնանք– Kgas, te menq gnanoq? և այլն), բացահայտության նշաններից՝ չակերտները (փոխարենը՝ «”», օրինակ՝ Դրա վրա գրված էր «Կարմիր»– Dra vra grvac er “Karmir”, Կարդացի «Ծաղկե քառյակ»-ը– Կարդացի “Ծաղկե քառյակ”-ը–Kardaci “Caxke qaryak”-y, «Տուն» բառով պետք է սկսեր– “Տուն” բառով պետք է սկսեր – “Tun” barov petq e skser և այլն), տրոհության նշաններից՝ վերջակետը (փոխարենը՝ «.»), օրինակ՝ Մենք շուտով մեկնելու ենք:– Մենք շուտով մեկնելու

ենք. – Menq shutov meknelu enk.,**Բոլորին հաջողություն են մաղթում:**– Բոլորին հաջողություն են մաղթում. – Bolorin hajoxutyun em maxtum. և այլն), միջակետը (այսպես՝ «:» կամ «;», օրինակ՝ **Պատասխանեցի. «Տուր՝ անձամբ բերի»:** – Պատասխանեցի: “Տուր՝ անձամբ բերի”, **Չեն գնա. ինքնիրեն ամեն ինչ կհարթվի:** – 4em gna; inkiniren amen in4 khartvi. և այլն) և բութը (այսպես՝ «-» կամ «’», օրինակ՝ **Մենք՝ անպայման, մյուսները՝ չգիտեն:**– Menq’ anpajman, mjusner@’ chgitem. **Մեզ թվում էր՝ ամեն ինչ ճիշտ է:**– Mez tvum er-amen inch chisht e.): Քիչ տուժող նշանները ստորակետն ու կախման կետերն են, որ արտառոց շեղումներ չունեն: Մյուս կետադրական նշանները պարզապես մոռացված են, օրինակ՝ շեշտը, փակագծերը սովորաբար չեն կիրառվում իրենց իսկ նշանակությամբ: Իհարկե, փակագիծը անհամեմատ շատ է հանդիպում, սակայն ոչ թե որպես կետադրական, այլ որպես հույզ արտահայտող նշան: Կարելի է ցույց տալ այնպիսի դեպքեր, երբ շեշտի, բացականչության իմաստով հանդես է գալիս պարզապես մեծատառը: Այսպես՝ բառում տվյալ տառի վրա շեշտ դնելու փոխարեն պարզապես գրվում է այդ տառի մեծատառը, իսկ երբ անհրաժեշտ է տրամաբանական շեշտ կիրառել, ամբողջ բառը գրվում է մեծատառերով: Հաջորդող օրինակում «LILIT», «KORUM ES», «STEX ES», «ZANG» բառերը ընդգծված են որպես տրամաբանական շեշտ կրողներ.

```
Exav, LILIT axjik ! es qez ban em gru, isk du KORUM ESSSSSSSSSSSSS
bAYC STEX ES!!!
????
Vor gas, ZANG uxarki !!!
```


Ձևաբանական հարցեր: Որոշ խոսքի մասեր հաճախ փոխարինվում են օտար համարժեքով: Հատկապես տուժող խոսքի մասերից են շաղկապը, եղանակավորողները, ձայնարկությունը, թվականը ու երբեմն նույնիսկ բայը: Հանդիպում է «և», «ու» շաղկապների փոխարեն գործածված օտար «&» նշանը, *օրինակ Մենք և նրանք – Menq & nranq, Ես, դու և քույրդ – Es, du & quyrd, Ու ոչ ոք չկար – & voch vok chkar* և այլն: Հիացական, զարմացական, բավականության ձայնարկությունները հիմնականում հանդիպում են օտար «Wow!» արտահայտության տեսքով, իսկ օրինակ՝ դժգոհություն, ափսոսանք, վախ և նման զգացումներ, ապրումներ արտահայտող ձայնարկությունները՝ օտար «Oops!» ձևով:

Շատ հաճախ օժանդակ բայով կազմվող ժամանակածևերը տեսնում ենք որպես միասնական բառ, և դժվար է սա համարել գրագիտության համապատասխան աստիճանի բացակայության արդյունք, քանի որ այսպիսի խնդիր կա նույնիսկ գրագետ անհատի խոսքում: Կարծում ենք՝ սա ավելի շատ կապված է անփութության և անտարբերության հետ: Նշվածը գուցե ընդգծելու արժանի փաստերից չհամարեինք, եթե չլինեին դրա հետ կապված մյուս հետևանքները. օժանդակ բայը կցված գրելը շատ դեպքերում առաջացնում է քերականական համանուններ, որոնք իրենց հերթին իմաստային խառնաշփոթ են առաջացնում: Հաճախ էլ, երբ խոսքը գրվում է նույնիսկ հայատառ, կարելի է տեսնել հարակատար դերբայի, օրինակ, «-աց», «-ատս» ձևեր, որ լատինատառ գրելու արդյունք են:

Թվականը սովորաբար արտահայտվում է թվանշաններով:

Բառագիտական հարցեր: Էլեկտրոնային հաղորդակցման արդյունքում սկսվեց և դեռ շարունակվում է բառային նորաբանությունների հոսք հայերենի բառային կազմ: Հատուկ պետք է նշել օտարաբանությունները, այն էլ իմաստային աղավաղումով հանդես եկող: Այսպես, օրինակ, «կայք»-ի փոխարեն գործածվում է «սայթ» բառը, այն էլ բառիմաստի նեղացումով. «site» նշանակում է համացանցում կազմակերպության էլեկտրոնային փաստաթղթերի ամբողջություն մեկ հասցեի ներքո, բայց մեծ մասամբ

գործածվում է՝ կայքի անձնական էջը նկատի ունենալով: Հետևյալ օրինակի բովանդակությունից երևում է, որ զրուցակիցներից մեկը «sayts» բառով նկատի ունի իր անձնական էջը. դժվար թե կայքը որևէ մեկը նվիրեր որևէ մեկին, մինչդեռ անձնական էջը հնարավոր է հանձնել ուրիշի տնօրինությամբ.



Մեկ այլ բառ. «ծածկագիր» բառի փոխարեն միշտ տեսնում ենք «փասվորդ» («password») և «պառուլ» («пароль») բառերը. «Պիտի փասվորդը փոխես», «Պառուլը սխալ ես հավաքում», «Միշտ մոռանում ես փասվորդդ, բոլոր պառուլները մի տեղ գրի»: Ինչպես նկատում ենք, խոսքը բոլորովին էլ համացանցային ժարգոնի մասին չէ: Խոսքը բառերի այն խմբի մասին է, որի գործածությունը միանշանակորեն խոսքի թերություններից է: Այս տեսակի բառերը երբեմն անհարմարություններ են ստեղծում թեկուզ հաղորդակցվողների փոխըմբռնման համար: Սակայն կարծում ենք, որ չարժե նույն բացասական տրամադրվածությունն ուղղել նաև այն բառերի կողմը, որոնց հայերեն համարժեքը չափազանց արհեստական է, ինչպես «scanner» բառի հայերեն ձևը՝ «տեսածրիչ»:

Հնչյունաբանական հարցեր: Այն ժամանակ, երբ համակարգիչը հասանելի դարձավ նաև հայ իրականության մեջ, երբ հարմարավետության համար ցանկալի և հետևաբար համատարած են՝ պաշտոնական թղթերի՝ դիմումից մինչև կուրսային ու ավարտական աշխատանքներ, թվայինից դեպի տպագիր (համակարգչով շարված և տպված) ճանապարհն անցած տեքստերը, համարձակվում ենք հայտարարել, որ տատանվեցին հայերենի ուղղագրության հիմքերը: Խոսքը և՛ տեխնիկական պատճառներով պարզապես տառային սայթաքումների մասին է, և՛ հատուկ դեպքերի: Վերջիններից է տողադարձը: Տողադարձը հայերենում ուղղագրական արժեք ունի: Եվ եթե թվային տեքստերում այն բացակայում է, ապա էլեկտրոնային հաղորդակցման ոլորտում ոչ միայն պարզապես հնարավոր չէ գտնել գոնե մեկ տողադարձ, այլ նաև բառը կարող է պարզապես բաժանվել կտորների, մասնատվել ծիծաղելիության աստիճանի:

Ուղղագրական լուրջ խնդիրներ են առաջանում հատկապես այն դեպքերում, երբ հաղորդագրությունը կազմվում է լատինական տառերով, օրինակ՝

yes inch anem?

yev etkany texavorvel er?????????

ha, bayc cev ka dran. hatuk es dasavorum

Վերը տրված օրինակում «և»-ը արտահայտված է մերթ «ev», մերթ էլ՝ «yev», «ե»-ն՝ «ye» ձևով և այլն:

Էլեկտրոնային հաղորդակցման դաշտերում մեծ մասամբ բացակայում է հայերենի այբուբենով կազմվող տեքստը: Սա էլեկտրոնային տեքստերում գրաբանական գերագույն խնդիրն է: Այբուբենը տվյալ քաղաքակրթության յուրօրինակ հայացքն է, «միայն այբբենային մշակույթներն են ճանաչողության բարձունքների հասել»⁹: Հայերեն տեքստերի հսկայական մասը միայն բովանդակությունից կարելի է ճանաչել, քանի որ գրվում է կան լատինատառ, կան ռուսերենի տառերով: Էլեկտրոնային հաղորդակցման մեջ լայնաճակատ գործող տրանսլիտը¹⁰ անգրագիտության պարարտ հող է: Այդպես է, որովհետև մեր օրերում նույնիսկ նախադարձական տարիքի անհատը լավ տեղյակ է էլեկտրոնային հաղորդակցմանը, բայց դեռ գաղափար չունի հայերենի քերականության մասին և մտնելով հորձանքի մեջ՝ միանգամից տեսնում է լեզվի աղավաղված պատկերը: Տրանսլիտի արդյունքում ստացվում են բազմաթիվ անհարկի համանուններ: Օրինակ՝ char – ճար - չար, gam – գամ - ժամ, ari – արի - աղի, dran – դրան - դրան, gank – ջանք - գանք, bari – բարի - բարի, tvec – տվեց - թվեց, pttum – փթթում - պտտում, taxi – թաղի - տաքսի, text – տեղդ - տեքստ, lur – լուռ - լուր, hox – հող - հոգս և այլն:

Տրանսլիտով փոխանցվող հայերեն տեքստը, կախված նրանից, թե հայերենի այս կամ այն յուրահատուկ հնչյունը ինչով կփոխարինվի, տարբեր աստիճանի աղավաղումներով է դրսևորվում: Երբեմն տառատեսակը զավեշտալի կամ անհարմար իմաստային շփոթների առիթ կարող է դառնալ: Հայերենի հետևյալ հնչյունները՝ «ը», «շ», «ճ», «ժ», «ծ», «չ», «ծ», «ղ», «ջ», «ց», «խ», «յ», «ք», միշտ արտահայտվում են կան փոխարինող տառի, կան պարզապես որոշակի նշանով, իսկ «թ» և «տ», «փ» և «պ», «ր» և «ռ» հնչյունները միևնույն նշանով են դրսևորվում, ընդ որում դրանց արտահայտման միջոցները համընկնում են, ինչը լրացուցիչ անհարմարություն է ստեղծում: Ստորև տալիս ենք նշված հնչյունների արտահայտության ձևերը և համապատասխան օրինակները.

- Ը – y – @ – e – YNKER, @NDAMEN@, YHY, BOLORE
- Շ – sh – s – SHAT, SARJUM
- Ճ – ch – j – tch – CHUTIK, JAKAT, TCHARPIK
- Ժ – j – g – zh – z – JAM, GERMUTYUN, ZHIRAYR, ZAYR
- Չ – dz – d – z – c – DZEZ, DEZ, ZEZ, CEZ

⁹Маклюэн М., նշվ. աշխ., էջ 45:


¹⁰«Տրանսլիտ» բառը պայմանականորեն ենք գործածում. իրականում համացանցը որպես հաղորդակցման միջոց օգտագործողների մեծ մասը տեղյակ չէ նույնիսկ տրանսլիտի կանոններին և հայերեն բառերը պարզապես գրում է այլ տառերով:

Ծ – c – ts – & – CAXIK, TSAXIK, &AXIK
 Ղ – x – gh – g – XAXAL, XAGHAL, XAGAL
 Ջ – j – g – JUR, GUR
 Ց – c – ts – CANEL, TSANEL
 Խ – x – kh – XNDREL, KHNDREL
 Յ – y – j – i – YOT, JOT, IOT
 Ք – k – q – KANDEL, QANDEL

Թ – t – tvats
 Տ – t – tva&
 Փ – p – pntrel
 Պ – p – parel
 Ր – r – varel
 Ռ – r – varel

Շատ հաճախ ամբողջ տեքստը կազմվում է միայն մեծատառերով կամ միայն փոքրատառերով՝ ընդամենը ստեղծաշարի համապատասխան կոճակը համապատասխան պահին սեղմելուց խուսափելու համար: Դրա տարածումը կարող է սպառնալիք լինել կամ մեծատառի, կամ փոքրատառի համար ընդհանրապես: Դա բնորոշ է ոչ միայն լատինատառ, այլև նույնիսկ հայատառ տեքստերին:

Տեքստ կազմողը հաճախ երկընտրանքի առաջ է կանգնում. հայատառ տեքստը կարող է մնալ բառի բուն իմաստով անընթեռնելի, իսկ տրանսլիտը չի տալիս հայերեն հնչյունը առանց «թարգմանության» ուղարկելու հնարավորություն (փաստորեն անհարկի համանունները երբեմն նույնիսկ հարկադրաբար կարող են առաջանալ), ինչպես ստորև տրվող օրինակում է. առաջին նախադասությունն ամենայն հավանականությամբ հայատառ է, սակայն զրուցակցի հարցը ցույց է տալիս, որ այդպես էլ անընթեռնելի է մնացել.



Շատ դեպքերում նկատվում է անփութության հետևանքով տառային դրափոխություն: Այսպիսի դեպքերն այնքան շատ են ու բազմազան, որ անիմաստ է նույնիսկ դասակարգման կամ խմբավորման փորձը:

Էլեկտրոնային հաղորդակցության բերած փոփոխությունը մեկ բառ կամ երեք արտահայտություն չէ. էլեկտրոնային հաղորդակցությունը տակնուվրա է անում ցանկացած լեզու: Հայախոսի համար տրանսլիտը այլընտրանք է, քանի որ էլեկտրոնային միջոցների հիմնական մասը զուրկ է հայերեն այբուբենից՝ չհաշված այն, որ դրա տարբերակների առկայության դեպքում խնդիրն ավելի է խորանում. հաղորդագրությունը կարող է փոխանցվել հայերեն մի տեսակի այբուբենով, իսկ ստացողը կտեսնի անվերծանելի նշանների խումբ, քանի որ իր մոտ բացակայում է համապատասխան գրատեսակը: Տրանսլիտը վտանգավոր է ոչ միայն բարոյահոգեբանական, ազգային մտածելակերպի, ազգային հպարտության ու արժանիքների տեսանկյուններից, այլ նաև այն իմաստով, որ

ուղղակի հարված է պարզագույն փոխընթացմանը. տրանսլիտով գրված բազմաթիվ բառեր կարող են լավագույն դեպքում մնալ անհասկանալի: Լավագույն դեպքում, քանի որ ավելի լավ է ոչինչ չհասկանալ գրված բառից, քան այն հասկանալ բոլորովին այլ իմաստով: Կախված համացանցային ծրագրից (browser)՝ հայերեն կայքերը կարող են այդպես էլ անմատչելի մնալ, քանի որ ոչ բոլոր օպերացիոն համակարգերն են ի գործ ինչպես հարկն է փոխանցել հայերենը: Այդ խնդիրը գուցե միանգամայն լուծելի է համապատասխան մասնագետի համար, սակայն հասարակության լայն զանգվածը չի կարող ինքնուրույն լուծել հարցը: Չի կարելի մոռանալ այն զանգվածի մասին, որ հատուկ գիտելիքներ չունի, բայց ունի համակարգիչ և համացանցի հնարավորություն: Կարելի է համակերպվել այն գաղափարի հետ, որ էլեկտրոնային տեքստերի բառապաշարն ու դրա առանձնահատկությունները առանձին շերտ են լեզվում, բայց միայն այն դեպքում, եթե դրանք չեն լրացնում լեզվի թերությունների շարքը: Չանազան պատճառներով ի հայտ եկող դիպվածային (օրինակ՝ տառի բացթողում կամ սայթաքում՝ hamar-hamr, patker@-pater@, karag-karg, mats-mahs և այլն), մեկ տառի պատճառով հաճախ իմաստայնորեն այդպես էլ անվերծանելի կամ պարզապես ենթադրելի բառերը (օրինակ՝ \at-շատ, ma8dik-մարդիկ, 3w84ank-փորձանք, жор гам-vor gam-որ գամ, Եерези-yezevi-երևի, кахыр- kaxcr-քաղցր), անվիճելի է, լեզվի համար մակարևոծ հատված են: Բացի այսքանից՝ ուղղախոսական կանոնի համաձայն՝ հայերենի «թ» շնչեղ խուլը ցանկացած դիրքում փոփոխություններ չի կրում, սակայն հատկապես գոյականակերտ «ություն» ածանցի մեջ դրա վերածվելը «ց» պայթաշփականի, որ համատարած տեսնում ենք բանավոր խոսքում, կարելի է տեսնել նաև էլեկտրոնային որոշ տեքստերում. ոմանք «utyun»-ի փոխարեն գրում են «ucyun», «ucun». այսպիսի դեպքերը նույնպես բազմաթիվ են: Պետք է նկատի ունենալ, որ *հայերենի բարձրագույն վիճակը էլեկտրոնային հաղորդակցման մեջ ի վերջո հասցնելու է նրան, որ լեզվական այն երևույթները, որոնց մասին վերը խոսվում էր զարմացական կամ հետքորքրասիրական երանգով, երբևէ, եթե ոչ մոտ ապագայում, կայունանալու և վերածվելու են ընդհանրապես նորմաների՝ էլեկտրոնային լեզվից մտնելով կենդանի խոսք*: Արդյո՞ք առանց այն էլ արդեն անկայուն հիմքերի վրա կանգնած գրական հայերենը պատրաստ է միանգամից այսքան փոփոխության, և արդյո՞ք մեր հատկապես գրական լեզուն չի հայտնվի անվերահսկելի դրության մեջ: Նկատի ունենանք, որ ամենադժվար տեղաշարժը՝ այբբենական մի համակարգից մյուսը, ինքնըստինքյան ստացված է:

Ժամանակի ընթացքում ստեղծվեցին և՛ հայկական չաթեր, և՛ հայկական սոցիալական կայքեր, մինչդեռ ամենաթողությունը լեզվում այդ տեղերում չի գիջում մյուս՝ ավելի վաղ ի հայտ եկած դաշտերում եղածին: Մտահոգիչ է նաև այն, որ հայկական սոցիալական կայքերի լեզվի միայն մի մասն է հայերեն:

Մեր լեզուն խնդիր ունի, ընդ որում այնպիսին, որի ծավալվելը ճակատագրական է: Տեսնելով հայերենի ներկա վիճակը համացանցում, պատկերացնելով մեր լեզվի առաջընթացն այս ճանապարհով՝ հարկ ենք համարում լուծում փնտրել: Արժե պարզապես արհեստականորեն սահմաններ դնել էլեկտրոնային լեզվին: Այդ սահմանափակումները պետք է գործեն որպես մոտավորապես տաբու կամ էվֆեմիզմ, քանի որ համացանցից օգտվողների մեծ մասը երբեք ինքնուրույն չի գիտակցի դրա անհրաժեշտությունը. որքան էլ ցավալի է, բայց «հասարակական կյանքին գցած հայացքը ցույց է տալիս, որ հասարակական անհատը պարզ է՝ հասարակ պահանջմունքներով, որին պարզապես գրավում են վեհ բացատրությունները»¹¹: Ի սկզբանե պարտադրված կանոնները կարող են հետագայում զարգանալ ինքնուրույն: Մենք չենք կարող համաշխարհային մասշտաբով ուղղորդել լեզվի կանոնավորումն ու զարգացումը համացանցում և, առավել ևս, սոցիալական կայքերում, բայց կարող ենք լավ օրինակ լինել՝

¹¹Борисов А. Роскошь человеческого общения. М., 1998, стр. 9-12.

սեփական լեզվի հանդեպ հոգատար վերահսկողություն սահմանելով: Էլեկտրոնային հաղորդակցման հայերենը տարբեր է հայերենի՝ ոչ միայն որպես պետական լեզու ընդունված, այլ նաև ցանկացած արդեն հայտնի տեսակից: Նպատակահարմար է առանձնացնել այն՝ անվանելով «անկանոն հայերեն», քանի որ իսկապես գործ ունենք մի լեզվի հետ, որտեղ բառի բուն իմաստով ամենաթողություն է: Այսպիսով, առաջին հերթին պետք է վերահսկել տառատեսակի կիրառությունը: Ծրագրավորողի և լեզվաբանի համատեղ աշխատանքը միանգամայն ի գորու է լուծել խնդիրը. նախ կարելի է կազմել ու գործի դնել այնպիսի ծրագիր, որ օտար այբուբենով հավաքվող տեքստը անմիջապես ավտոմատաբար վերածի հայատառ տեքստի: Նույն մեխանիզմով կարելի է օտար բառը անմիջապես փոխարինել հայերեն համարժեքով՝ այդպիսով խուսափելով օտարաբանություններից: Սկզբում սա զուցե որոշ դժվարություններ առաջացնի օգտագործողի համար, բայց աստիճանաբար կդառնա սովորական: Նկարագրված տիպի ծրագրի օգտագործումը կարող է օգտակար լինել նույնիսկ բանավոր խոսակցական լեզուն մաքրելու համար. եթե հաշվի առնենք այն, որ համացանցի լեզվին բնորոշ բազմաթիվ երևույթներ արդեն կարելի է նկատել բանավոր կամ գրավոր խոսքում, ապա կարող ենք հանդգնած լինել, որ էլեկտրոնային լեզվի մաքրությունից կվարակվի նաև բանավոր լեզուն: Սա, իհարկե, միայն լեզվաբանի կամ միայն ծրագրավորողի ուժերից վեր աշխատանք է. այն կարելի է իրագործել զուգե համապետական մակարդակով:

Չորրորդ՝ «Էլեկտրոնային տեքստը որպես ուսումնասիրության առարկա» գլխում ներկայացվում են էլեկտրոնային տեքստերը որպես տեքստի լեզվաբանության քննության առարկա, ցույց են տրվում դրանց տեղն ու դերը ավանդական համարվող տեքստատեսակների շարքում, ընդգծվում են որոշ ոճական առանձնահատկություններ:

Անցած դարը լեզվաբանությանը պարզեց մի նոր գիտաճյուղ, որի առանձնացումը չգիտես թե ինչու պայմանավորվեց ու հաստատվեց լեզվական իրողությունների ուսումնասիրության համար օգտագործվող գործիքի հիման վրա: Համակարգչային կոչված լեզվաբանության ուղղություններից են բնական լեզվի մշակումը՝ տարբեր բառարանների ստեղծումը, մեքենական թարգմանությունները, այսպես կոչված լեզվական կորպուսներ ստեղծելը, խոսքի, խորհրդանշանների մեքենական ճանաչումն ու համադրությունը և այլն, այսինքն՝ ցանկացած գործողություն դեպի լեզուն է ուղղված, մինչդեռ որպես միջգիտաճյուղ այն պետք է պարզի, թե ինչպես է մի օբյեկտը, որ տվյալ գիտության քննության առարկա է, կապվում մյուս օբյեկտի հետ կամ ազդում դրա վրա: Ի մի բերելով համակարգչային լեզվաբանության հիմնական նպատակներն ու խնդիրները¹²՝ հասկանալի է դառնում, որ այդ բնագավառն ի գորու չէ լեզվի և մտքի փոխհարաբերության որևէ խնդիր լուծել, քանի որ միայն լեզուն ուսումնասիրելով, այն էլ զուտ կառուցվածքային տեսանկյունից՝ մտքի և լեզվի վերաբերյալ բացահայտումների հասնելը հավասար է սեփական գլխից վեր ցատկելուն:

Արժե նկատի ունենալ «համակարգչային լեզվաբանություն» արտահայտության վերաբերյալ արդեն եղած կասկածները¹³ և գնալ երկու ճանապարհներից մեկով՝ կամ «համակարգչային լեզվաբանություն» տերմինը թողնել տեխնիկական գիտություններին՝ որպես այն լեզվի ուսումնասիրության անվանում, որից օգտվում է ծրագրավորումը, և կամ ամեն ինչ իր տեղը դնել՝ ներմուծելով «լեզվի համակարգչային քննություն» տերմինը: Այդ դեպքում պարզ կդառնա, որ էլեկտրոնային տեքստը տեքստի լեզվաբանության ուսումնասիրության առարկան է, որ մեքենական թարգմանությունը պարզապես թարգմանություն է, որից բնական լեզուն դեռևս ոչինչ չի շահում, որ լեզվական կորպուսները

¹²St'u Зубов А., Зубова И. Информационные технологии в лингвистике. М., 2004, стр. 9:

¹³Гладкий А., Мельчук И. Элементы математической лингвистики. М., 1969, стр. 15-16.

դեռ քերականության աղավաղումներ են: Փաստորեն էլեկտրոնային նոր տեխնոլոգիաները նոր միջգիտաճյուղ չեն ստեղծում, բայց տալիս են ուսումնասիրության նոր առարկա՝ լեզվական միավորների ստորակարգության մեջ ավելացնելով ևս մեկ տեսակ՝ էլեկտրոնային տեքստը, և տեքստի լեզվաբանությունը նոր խնդիր է ստանում՝ գտնել այդ նոր տեսակի «կենտրոնը՝ այն կետը, որտեղ նշանակությունների, տարրերի ու եզրաբառերի փոփոխություն հնարավոր չէ»¹⁴:

Տեքստ միավորի դասակարգումներից հատկանշական են դրա ոճական տիպեր առանձնացնելու փորձերը¹⁵: Կարծում ենք, որ անհաշվելի տեքստերի՝ հենց այս հայեցակետով դասակարգման շնորհիվ է հնարավոր լեզվական այս միավորը դարձնել որոշակի՝ այսպես ասած մատնանշելի, այնպիսին, որ կարելի է ցույց տալ: Տեքստի տեսակները առանձնանում են իրադրական կիրառությունների հիման վրա¹⁶: Այդ կիրառությունները լեզվաբանության մեջ հայտնի են «ոճ» եզրաբառով: Էլեկտրոնային հաղորդակցում իրականացնող լեզվական կառույցները տեքստեր հռչակելով՝ անմիջապես կանգնում ենք դրանց ոճական պատկանելության հարցի առաջ: Պարտավոր ենք էլեկտրոնային տեքստերը դնել նաև ոճույթի աստիճանին հատկապես այն պատճառով, որ հիմնականում դրանք գոյություն ունեցող տեքստատեսակների թվային զուգահեռներ են, որոնք միտված են ճնշելու իրական-նյութական տեքստերը: Թվային կամ էլեկտրոնային տարածության մեջ կարելի է գտնել հրապարակախոսականից մինչև առօրյա-խոսակցական ոճի տեքստեր: Էլեկտրոնային տեքստը զանազան տեսակներ ունի: Տարբերակման արդյունքում ստացվում են հետևյալ տեսակները՝ **էլեկտրոնային հոդված, էլեկտրոնային քննարկում, էլեկտրոնային փոստից ուղարկվող նամակ, անձնական-մտերմիկ նշանակության նամակներ**, որոնք իրենց հերթին կարող են լինել *զրույց-տեքստեր և նամակ-տեքստեր*: Այս տեսակները միաժամանակ և՛ իրարից են տարբեր, և՛ բոլորը միասին վերցրած՝ տարբեր են նյութական տեքստերից: Չարժե բավարարվել՝ փնտրելով ընդամենը մեկ կամ միատեսակ կապ իրական-նյութական և իրական-կարծեցյալ տեքստերի միջև, և նույնիսկ չարժե դրանք միասնականության սկզբունքով համեմատել՝ որպես համեմատության եզր վերցնելով ընդհանրապես էլեկտրոնային տեքստը և ընդհանրապես նյութական տեքստը: Եթե հարցին նայենք հաղորդակցական տեսանկյունից, ապա պետք է ասել, որ իրական-կարծեցյալ և իրական-նյութական տեքստերը ըստ էության նույն գործառույթներն են իրականացնում, բայց այն տարբերությամբ, որ էլեկտրոնային ցանկացած տեքստ կրկնակի թարգմանություն է. ստեղնաշարից ներմուծված ցանկացած նշան նախ վերածվում է երկուական համակարգի, ապա՝ կրկին վերածվում զանգվածայնորեն ընթեռնելի նշանների: Սա հաղորդակցվողների համար կարևոր է այնքանով, որ ստացողին հասնող անընթեռնելի նշանները հենց այս անցման արդյունքն են. տեքստն ուղարկողի մոտ տվյալ տեքստի կողք և ստացողի մոտ այդ նույն կողք կարող են անհամատեղելի, անհասկանալի լինել էլեկտրոնային սարքի համար, և ստացողի մոտ այդ կողք կվերածվի պարզապես անհասկանալի նշանների:

Էլեկտրոնային տեքստերի զարգացման ուղին ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ դրանք միանշանակ կառուցվածքային բարդացում են ապրել և միտում ունեն ոչ թե ավելի բարդանալու, այլ դարձյալ պարզեցման. կազմվող խոսքը ոչ թե միջոցների խնայողությունից դեպի միջոցների գերխնայողություն է գնում, այլ լեզվի կանոնավորությունից դեպի անկանոնություն է շարժվում, և այդ անկանոնությունն արմատանում է, իսկ միջոցները ոչ թե խնայվում, այլ կրճատվում են:

¹⁴Деррида Ж. Письмо и различие. СПб, 2000, стр. 353.

¹⁵Տե՛ս Солганик Г. Стилистика текста. М., 1997, стр. 41:

¹⁶Տե՛ս Гаузенблас К., նշվ. աշխ., էջ 58, Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2006, էջ 17-19:

Մեր մատնանշած իրողություններից բացի՝ էլեկտրոնային հաղորդակցման մեջ հանդիպում են նաև խիստ անհատական, դիպվածային տեքստային հյուսվածքներ, առանձնահատուկ կառուցվածքով ու լեզվով կազմված տեքստեր, որոնց մասին չարժե խոսել էլեկտրոնային տեքստերի ընդհանրական բնութագիր կազմելիս: Բնականաբար, կարելի է բացառիկ կառուցվածքային դրսևորումներով տեքստերի հետազոտություններ նույնպես կատարել՝ այդպիսով ստանալով էլեկտրոնային հաղորդակցման լեզվի վերաբերյալ մասնավոր, խոր ուսումնասիրություններ:

Վերջաբանում տրված են մեր ուսումնասիրության ընդհանրացումները: Ստացված **եզրակացությունները այսպիսին են.**

Ա. Որպես տեքստի դրսևորման անվանումներ գործածվող «բանավոր տեքստ» և «գրավոր տեքստ» արտահայտությունները չեն ընդգրկում տեքստի դրսևորման բոլոր կամ գոնե հիմնական ձևերը: Տեքստի դրսևորման ձևերն են նյութական տեքստերը և գաղափար-տեքստերը (միտքը): Նյութական տեքստերը լինում են գրավոր և բանավոր, իսկ գաղափար-տեքստը չունի ենթատեսակներ: Սակայն նորագույն ժամանակի բերած հաղորդակցության նոր տեսակը նյութական տեքստերի երկու եզրերին գումարեց ևս մեկը՝ տեքստի էլեկտրոնային տեսակը: Էլեկտրոնային տեքստը, չնայած գործառնության նույնությանը, հակադրություն է լեզվի արդեն եղած բոլոր դրսևորումներին, քանի որ ազատ է: Բայց էլեկտրոնային տեքստը չի ենթարկվի վերահսկողության այնքան ժամանակ, քանի դեռ պարզ չէ, թե որ գիտության ուսումնասիրության առարկան է. այն տեքստի լեզվաբանության ուսումնասիրության առարկան է, քանի որ ամեն դեպքում տեքստ է:

Բ. Էլեկտրոնային տեքստը գործնականում արդեն իր տեղն ունեցող տեքստի տեսակ է, որը, սակայն, դեռ հաշվի առնված չէ տեսության մեջ: Էլեկտրոնային տեքստերի գլխավոր առանձնահատկությունը թերևս լեզվական և ոչ լեզվական տարրերը համադրելու հնարավորությունն է: Տեսությունը գուցե դեռ երկար չներառի տեքստի այս տեսակը միայն այն պատճառով, որ այն որպես տեքստի առանձին տեսակ ընդունելով՝ ստիպված է լինելու գոնե որոշակի վերապահումով լեզվական տեքստի մաս համարել նաև ոչ լեզվական լրացումները: Դրանց կարելի է ինչ-որ տեղ հատկացնել՝ «վարձակալելով» արդեն եղած եզրաբառերից մեկը՝ դրանք համարել, օրինակ, «ներմարմնավորյալ տեքստեր»:

Գ. Էլեկտրոնային տեքստը տարբեր հարթակներում դիտարկելիս պարզվում է, որ բոլոր դեպքերում այն առանձնահատկություններ է դրսևորում: Հատկապես քննելով հայերեն տեքստը՝ նկատվում է, որ չնայած անկանոնությանն ու թերություններին՝ այն կարող է դառնալ լեզվի հարստացման ճանապարհներից մեկը: Էլեկտրոնային հայերենի վերջնական հայերենացումը և հայերեն տեքստերի զարգացումը, կատարելագործումը կարող են նույնիսկ օգտակար լինել նաև կենդանի գրական լեզվի մաքրմանն ու վերահսկմանը: Այդ վերահսկումն ու մաքրումը պետք է հեռու մնան մաքրամոլությունից, իսկ անիշխանությունը վերածվի ազատության:

Դ. Հենվելով լեզվական և ոչ լեզվական տեքստերի տարանջատման վրա՝ էլեկտրոնային տեքստերը դասակարգելիս պարզեցինք, որ նշված տարանջատումը նախ՝ միանգամայն գործում է նաև էլեկտրոնային հաղորդակցման դաշտում, ապա՝ ընդունված է նշված երկու տեքստատեսակների փոխներթափանցումը և մեկի փոխարինումը մյուսով: Այդքանը հաշվի առնելով՝ ոչ լեզվական տեքստերը տվյալ դեպքում համարվել են լեզվական տեքստի յուրատեսակ կողավորումներ, և էլեկտրոնային հաղորդակցման դաշտում զուտ լեզվական տեքստերին զուգահեռ կարևորվել է դրանց վերլուծությունը նույնպես: Էլեկտրոնային իրականության մեջ ցանկացած թեկուզ ոչ լեզվական նշան, որ որոշակի տեղեկատվություն է փոխանցում, պետք է տեքստի մաս համարել:

Ե. Էլեկտրոնային տեքստերի զարգացման ուղին ուսումնասիրելիս երևում է, որ դրանք կառուցվածքային առումով բարդացել են: Սակայն էլեկտրոնային տեքստերի ներկա բարդ դրսևորումները միտված են կրկին պարզեցվելու: Պարզեցում ասելիս տվյալ դեպքում

նկատի ունենք այսպես ասած ստեղծագործական գործընթացի և լեզվական միջոցների կրճատումը:

Զ. Առաջարկվում է չհրաժարվել նոր տեքստատեսակի բերած դրական տարրերից և պարզապես կազմակերպել լեզվական բոլոր դրսևորումների միջև փոխազդեցություն, այլ ոչ թե միակողմանի ազդեցություն՝ *էլեկտրոնային լեզու - բանավոր խոսք - գրական լեզու* ուղղությամբ: Եթե դիտարկումների արդյունքում նկատվում են այնպիսի իրողություններ, որ ոչ թե աղավաղում են լեզուն, այլ արդեն եղած լեզվական իրողությունների շարքն են լրացնում կամ մինչ այդ լեզվական արտահայտություն չունեցած իրողություններ են, կարելի է թույլ տալ դրանց ազատ տեղաշարժը նույնիսկ գրական լեզու:

Է. Նկատի ունենալով էլեկտրոնային հաղորդակցման բուռն զարգացումն ու տարածումը՝ մասնավորապես հայ լեզվաբանների համատեղ աշխատանքը ցանկալի է ուղղել նորագույն իրականության մեջ գործածվող հայերենի որակի բարձրացմանն ու եղած լավագույն արժեքների պահպանմանը: Անհանգստանալու առիթ կա, քանի որ էլեկտրոնային հաղորդակցությունը զանգվածաբար մատչելի է, ուրեմն հասարակության այն հատվածը, որ առանձնապես հաշվետու չէ ինքն իր գործածած լեզվի համար, ուղղակի վտանգի է ենթարկում նաև արդեն քիչ թե շատ կանոնավոր լեզուն:

Մարդկային հաղորդակցության թերևս գլխավոր նպատակը հասարակության անդամների միջև արագ ու բազմագործառույթ կապ ստեղծելը, որքան հնարավոր է շատ ու բազմազան տեղեկատվություն փոխանցելն է: Էլեկտրոնային հաղորդակցման անընդհատ ծավալումից ու զարգացումից կարելի է եզրակացնել, որ հաղորդակցման այդ ձևը վերը նշված նպատակին հասնելու լավագույն ձևերից է:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝

1. Տեքստի հաղորդակցական արժեքը, «Բանբեր Երևանի համալսարանի. հասարակական գիտություններ», թիվ 132.2, Եր., 2010, էջ 71-75:
2. Էլեկտրոնային տեքստերի դասակարգումը՝ ըստ տեղեկատվության ծավալի, «Կանթեղ», թիվ 3, Եր., 2012, էջ 48-53:
3. Էլեկտրոնային տեքստը որպես տեքստի լեզվաբանության ուսումնասիրության առարկա, «Վեմ», թիվ 3, Եր., 2012, էջ 117-120:
4. Տեքստի պատմական և մշակութային արժեքը, «Վեմ», թիվ 2, Եր., 2013, էջ 128-132:
5. Հայերեն տեքստը էլեկտրոնային հաղորդակցման մեջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 3 (639), Եր., 2013, էջ 237-245:

Оганесян Сирануш Гарниковна

Текст в электронной коммуникации

Резюме

В последнее время языковедение уделяет особое внимание крупнейшей языковой единице – тексту. Изучением этой единицы занимается лингвистика текста – лингвистическая дисциплина, сформированная в начале XX века. Этот век ознаменовался распространением новейших средств коммуникации. В сфере коммуникации особое место занимает интернет, который оказывает влияние и на язык. Хотя текст как языковая единица становится объектом исследования, но, в частности, электронный текст, несмотря на широкое распространение электронной коммуникации, не изучался широко и всесторонне в языковедении вообще и тем более в армянском языковедении. Учитывая то обстоятельство, что электронная коммуникация давно уже общедоступна также в армянской среде, и что всякое новое явление влияет на язык, в качестве объекта нашего исследования взят текст в электронной коммуникации. В центре нашего внимания находится электронный армянский язык. Наш анализ электронного армянского показывает, что есть повод для беспокойства и необходимость серьезно и последовательно следить за состоянием родного языка.

Данное лингвистическое исследование электронных текстов выполнено на основе практического и теоретического материала. Наиболее типичные тексты из собранных нами разнообразных электронных текстов, количество которых превышает 1000, представлены в нашей работе как основания для теоретических суждений и выводов. Используя богатый материал интернета, мы не только разграничили типы электронных текстов, выявили их лингвостилистические особенности, но и классифицировали их на основе структуры, ситуации использования, выбора средств выражения. В работе показано, что электронный текст является самостоятельным текстотипом, обладающим специфическими свойствами.

Наше исследование построено сочетанием двух точек зрения – чисто-лингвистического и социо-философского. Это отношение к проблеме, стоящей перед

нами, дала нам возможность одновременно представить непосредственно связанные с широкомасштабным распространением электронной коммуникации вопросы, касающиеся и языка, и языкового мышления.

Диссертация состоит из введения, четырех глав, разделенных на подглавы, и послесловия.

В первой главе, принимая во внимание вклад предыдущих исследователей, мы старались избегать недостатков прошлого, сочетать имеющиеся достижения и собственные наблюдения. Мы представили также наше понимание текста как языковой единицы, его характеристику и определение с нашей точки зрения.

Во второй главе представлены изменения, происходящие в языке как последствия электронной коммуникации. В этой же главе дается описание электронного текста, выделяются его типы и выявляются их особенности. В конце главы объясняются причины возникновения и распространения новейшего вида коммуникации и его значение для общества вообще.

Третья глава посвящена армянскому языку в электронной среде. Наблюдения показывают, что электронный армянский полон недостатков. Указывается возможный выход родного языка из нежелательного состояния.

В четвертой главе электронные тексты представляются как объект изучения лингвистики текста, подчеркивается их роль и место среди традиционных текстотипов, представляются некоторые стилистические особенности электронного текста.

Послесловие включает обобщения и выводы, сделанные на основе проведенного нами исследования.

Siranush Garnik Hovhannisyan

The Text in Electronic Communication

Summary

Recently, in the sphere of linguistics special attention is given to the largest unit of linguistic structure – the text. A separate branch of linguistics– text linguistics, formed in the early twentieth century, deals with the study of the text. This century is also significant for the spread of the newest means of communication. The Internet has its unique place in terms of human communication, consequently it has an effect on the language as a whole. While the text as a linguistic unit has undergone numerous investigations, electronic texts which are a widespread means of communication, haven't been investigated thoroughly and comprehensively not only within linguistics in general, but also within Armenian linguistics in particular. Taking into consideration the fact that electronic communication has long been widely available in the Armenian reality as well, and that any new phenomenon affects a language in general, the object of our research is the text in electronic communication. The centre of our attention is electronic Armenian. Our study of electronic Armenian shows that there is need to seriously and firmly be attentive to our mother tongue.

The given study of electronic texts is done on the basis of practical and theoretical material. From the variety of more than 1000 electronic texts which we have collected, the most typical ones are presented in this dissertation as the bases and examples of theoretical material. Making use of the rich material of the Internet, we have not only made screening, identified stylistic and linguistic features, but also classified electronic texts according to their structure, situational usage, the choice of means of expression. It is shown that an electronic text is an independent text type which has typical features of its own.

Our study is done by comparing two points of view – purely linguistic and socio-philosophical. This position in relation to the subject matter of our study, gave us the opportunity to simultaneously present the questions concerning the language and the

language mentality, which are directly related to the large-scale distribution of electronic communication.

The dissertation consists of an introduction, four chapters, which in their turn have sub-chapters and epilogues.

In the first chapter, taking into account the contribution of previous researchers, we have tried to make up for the shortcomings of the past, to compare the already accomplished achievements of the past and our own observations. We also presented our approach to the text as a linguistic unit and gave its characterization and definition from our point of view.

The second chapter summarizes the changes in the language as a consequence of electronic communication. The chapter describes the electronic text, its types and characteristic features of these types. The chapter explains the reasons for the emergence and spread of the latest means of communication and its role for society in general.

The third chapter concerns the Armenian language in the electronic environment. Observations show that the electronic Armenian language is full of flaws. We have tried to show the possible way of pulling out our mother tongue from the existing unpleasant situation.

In the fourth chapter electronic texts are presented as an object of study of text linguistics, their role and place among traditional text types is underlined, some stylistic peculiarities of electronic text types are presented.

The epilogue consists of the generalization of the study and conclusions based on the material.